

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԵՎ ՍՈՑԻԱԼ_ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՆԱԲԻՆԵ ԱԴՈՆՑ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոբանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.*

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՍԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԱՅՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Կենսամակարդակը տնտեսական կարևորագույն կատեգորիա է, որը թույլ է տալիս պատկերացում կազմել հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի մասին՝ որպես տնտեսական ու սոցիալական հարաբերությունների ընդհանրացված արտահայտություն: Տնտեսագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել «կենսամակարդակ» կատեգորիայի տարբեր մեկնաբանումների: Որոշ հեղինակների կողմից այն քննարկվում է լայն իմաստով՝ որպես մարդկանց կենսագործունեությունը բնութագրող տարբեր պայմանների ամբողջություն, որոնք թույլ են տալիս որոշել անհատի տեղն ու դերը հասարակության մեջ: Որոշ հեղինակներ էլ այն դիտարկում են նեղ իմաստով՝ որպես այդ ամբողջության մի մաս:

Կենսամակարդակ հասկացության լայն մեկնաբանումներից է հետևյալ բնորոշումը, համաձայն որի կենսամակարդակը ներկայացվում է որպես «երկրի բնակչության կյանքի պայմանների ամբողջություն, որը համապատասխանում է նրա տնտեսական զարգացման ձեռք բերած մակարդակին»¹:

Կենսամակարդակի ավելի նեղ բնորոշման կարելի է հանդիպել Վ.Ֆ. Մայերի մոտ, համաձայն որի կենսամակարդակը բնակչության կյանքի համար անհրաժեշտ նյութական և մշակութային (հոգևոր) բարիքներով ապահովվածությունն է, նրանց սպառման ձեռք բերած մակարդակը և այդ բարիքներով մարդկանց պահանջմունքների բավարարման աստիճանը²:

Որոշ հեղինակների կարծիքով էլ «կենսամակարդակ» կատեգորիան բնութագրում է մարդու պահանջմունքների կառուցվածքը և դրանք բավարարելու հնարավորությունները³:

Մ.Խ. Չոբանյանի կարծիքով կենսամակարդակը բնակչության նյութական ու կուլտուրական (հոգևոր) անհրաժեշտ բարիքներով ապահովվածությունն է, որը բնորոշում է նրանց սպառման մակարդակը և պահանջմունքների բավարարման աստիճանը հասարակության զարգացման տվյալ փուլում⁴:

Ըստ Բ.Ա. Ռայզբերգի՝ կենսամակարդակը պայմանների ու ցուցանիշների ամբողջությունն է, որոնք բնութագրում են մարդկանց հիմնական, կենսական պահանջմունքների բավարարման չափը⁵: Այսինքն՝ նա առանձնացնում է մարդկանց հիմնական, կենսական պահանջմունքների բավարարումը:

Ալֆ. Մարշալի կարծիքով կենսամակարդակի բարձրացումը նշանակում է գիտակցության, էներգիայի ու սեփական արժանապատվության զգացումի այնպիսի բարձրացում, որը

¹ Большой экономический словарь / под ред. А.Н.Азрилияна – 2-ое изд. доп. и перераб. – М. Институт новой экономики, 1997, ст. 764.

² Майер В.Ф. Планирование социального развития и повышения уровня жизни народа: - М. изд. ВО МГУ, 1998 – ст. 8.

³ Савченко П., Федорова М., Шелкова Е. Уровень и качество жизни: понятия, индикаторы, современное состояние в России // Российский экономический журнал – 2000 - №7. – ст. 66.

⁴ Չոբանյան Մ.Խ., Քաղաքային և գյուղական բնակչության կենսամակարդակի մեթոդները զարգացած սոցիալիզմի պայմաններում, Եր., Հայաստան, 1980, էջ 6:

⁵ Райзберг Б.А., Лозовский Л.И., Стародубцева Е.Б., Современный экономический словарь. – 3-е изд., перераб. и доп. – М.: 2001. – ст. 410.

միջոցները ծախսելիս մարդուն ուղղորդում է դեպի առավել զգուշավորությունն ու խելամուտությունը, ստիպում է բացառել սննդի ու խմիչքի այնպիսի ծախսերը, որոնք ախորժակ են գրգռում, բայց չեն ավելացնում ուժերը, և այնպիսի զգացմունքները, որոնք պատճառում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ բարոյական վնասներ:

Այսպիսով, կարելի է ասել, որ կենսամակարդակը բնակչության իրական սպառումն արտացոլող սոցիալ-տնտեսական կատեգորիա է, որն արտահայտում է բնակչության պահանջմունքների զարգացման աստիճանը, պահանջմունքների կառուցվածքը, հասարակական ճանաչում ստացած հիմնական կենսական պահանջմունքների բավարարման իրական մակարդակը:

Բազմաթիվ հեղինակներ «կենսամակարդակը» նույնացնում են «բարեկեցություն», «ապրելակերպ», «կյանքի նվազագույն ստանդարտ», «կյանքի որակ» և մի շարք այլ նմանատիպ կատեգորիաների հետ, այսինքն՝ այն ամենի հետ, ինչը պայմանավորում է մարդու կենսագործունեությունն ու զարգացումն ամբողջությամբ:

Այսպես, օրինակ, Վ. Բալիկովի կարծիքով. «...հասարակական բարեկեցության մակարդակը մարդկանց ապահովվածության աստիճանն է՝ նյութական բարիքներով, ծառայություններով ու հետևաբար կենսապայմաններով, որոնք անհրաժեշտ են նրանց հարմարավետ ու անվտանգ գոյության համար»¹:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը կենսամակարդակը նույնացնում է բարեկեցության հետ, այն քննարկում լայն իմաստով, բնութագրում նաև որպես հարմարավետ ու անվտանգ գոյության համար պայմաններով ապահովության աստիճան: Մինչդեռ բազմաթիվ հեղինակներ կենսամակարդակը ներկայացնում են որպես բարեկեցության բաղկացուցիչ մասերից մեկը: Նրանց կարծիքով «բարեկեցությունը» լայն հասկացություն է և ներառում է «կենսամակարդակը», «ապրելակերպը» և «կյանքի որակը»:

Կենսամակարդակի մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով քննարկենք վերը նշված կատեգորիաներն առանձին-առանձին:

Տնտեսագիտական գրականության մեջ «ապրելակերպը» շատ հաճախ բնութագրվում է որպես մարդկանց կենսագործունեություն կամ ակտիվություն մարդկային գործունեության տարբեր ոլորտներում՝ աշխատանքի պրոցեսում, կենցաղում, ընտանիքում, հասարակական-քաղաքական կյանքում և այլուր: Բնորոշումից տեսնում ենք, որ «ապրելակերպը» առնչվում է գործունեության տարբեր ոլորտների հետ և կարծես թե միաձուլում ու կապում է նշված գործունեության ձևերի էական գծերը, որոնք չնայած շատ տարբեր են, բայց որոշակի համադրումների տեսքով ներկայացնում են հասարակության, անհատի ապրելակերպը:

Եվ պատահական չէ, որ Բ.Վ. Ռակիտսկին «ապրելակերպ» կատեգորիան մեկնաբանում է որպես ոչ թե միայն առանձին մարդկանց, այլ նրանց սոցիալական խմբերի, շերտերի, դասակարգերի գոյատևման եղանակ²: Գոյատևելու, պահանջմունքները բավարարելու նպատակով մարդը հասարակության մեջ դրսևորում է որոշակի վարքագիծ:

Հենց այս վարքագիծն էլ թույլ է տալիս պատկերացում կազմել անհատի ապրելակերպի մասին: Դրա համար էլ ճիշտ կլինի ապրելակերպը բնորոշել որպես մարդու վարքագծի դրսևորման ձև:

«Կենսամակարդակը» չի կարելի նույնացնել «կենսական ստանդարտի» հետ, քանի որ «կենսամակարդակը» փաստացի ցուցանիշ է, մինչդեռ կենսական ստանդարտը օրենքով սահմանված այն նորմերի ու նորմատիվների ամբողջությունն է, որոնք ամրագրում են սոցիա-

¹ Баликов В.З. Общая экономическая теория., Новосибирск: 1998. ст. 213.

² Ракитский Б.В., Стратегия благосостояния, - М.: 1993, ст. 2.

լական պաշտպանության նվազագույն մակարդակը: Նման ստանդարտներ են սահմանվում աշխատավարձի, կենսաթոշակային ապահովության, կրթության, առողջապահության, մշակույթի, բնակարանային-կոմունալ սպասարկման և այլ ոլորտների գծով:

Սոցիալական զարգացումը բնութագրող առավել ընդգրկուն հասկացություն է «կյանքի որակը», որը բազմաթիվ տնտեսագետներ բնութագրում են որպես «մարդկանց առողջություն, կրթարական ներուժ, մշակութաբարոյական հնարավորություններ», իսկ Կամակի կարծիքով՝ «կյանքի որակն» մի շարք բնութագրիչների ամբողջություն է, որն արտացոլում է բնակչության նյութական, սոցիալական, ֆիզիկական ու հոգևոր բարեկեցությունը»¹:

Շատ հաճախ «կյանքի որակը» ներկայացվում է որպես կյանքի հարմարավետությունը որոշող պայմանների ամբողջություն: Հարմարավետություն ասելով հասկացվում է մարդկանց այնպիսի պահանջմունքների բավարարումը, որը բխում է ոչ թե անհրաժեշտությունից, այլ մարդկանց ցանկություններից: Հարկ է նկատել, որ «կյանքի որակը» ձևավորում ու պայմանավորում է հասարակության ու անհատի կենսագործունեության համար անհրաժեշտ ինչպես օբյեկտիվ պայմանները, այնպես էլ դրանց սուբյեկտիվ-հոգեբանական գնահատումը:

Որպես Մարդկանց կենսագործունեության օբյեկտիվ պայմանները բնութագրող հիմնական ցուցանիշներն են շրջակա միջավայրի աղտոտվածությունը, գործազրկության, հանցագործությունների մակարդակը և այլն:

Սուբյեկտիվ-հոգեբանական գնահատման հիմքում ընկած է անհատի կողմից կյանքի պայմանների գնահատումը, իսկ վերջինս մեծապես կախված է մարդու անհատական հատկանիշներից՝ հոգեկան վիճակից, կենսավորձից, մտավոր ներուժից, կյանքից բավարարված լինելու աստիճանից, սեփական երջանկությունից: Այլ կերպ ասած, այս դեպքում «կյանքի որակը» գնահատվում է՝ ելնելով ոչ նյութական արժեքներից:

«Կյանքի որակի» բնութագրումը թույլ է տալիս մեզ եզրակացնել, որ այն ավելի լայն, ընդգրկուն հասկացություն է, քան «կենսամակարդակը»: Քանի որ կենսամակարդակը կյանքի որակը բնութագրող օբյեկտիվ պայման է, ուստի այն ներառվում, արտացոլվում է կյանքի որակի մեջ:

«Կենսամակարդակի» և «կյանքի որակի» միջև գոյություն ունի շատ ավելի որոշակի կապ, քան «կենսամակարդակի» և «ապրելակերպի» միջև: Դա բացատրվում է նրանով, որ, մեր կարծիքով, «կենսամակարդակը» «կյանքի որակի» բաղկացուցիչ մասն է, ուստի այն կարող է էապես ազդել «կյանքի որակի» վրա: Հնարավոր չէ խոսել կյանքի բարձր որակի մասին առանց բարձր կենսամակարդակի:

«Կենսամակարդակը» այն ելակետն է, որը պայմաններ է ստեղծում «կյանքի որակը» բարելավելու համար: Դա է պատճառը, որ պետությունն իր սոցիալական քաղաքականությունն իրականացնելիս մեծ ուշադրություն պետք է դարձնի բնակչության կենսամակարդակի բարձրացման խնդիրներին:

Բնակչության բարեկեցությունը ներկայացվում է զբաղվածության, աշխատավարձի և եկամուտների, սոցիալական վճարների, բնակչության ձեռք բերած ամբողջ նյութական և հոգևոր բարիքների, ֆիզիկական և հոգևոր առողջության մակարդակի, կրթության, մշակույթի և մտավոր ներուժի ցուցանիշներով: Այս ցուցանիշներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, այսինքն՝ գոյություն չունի կենսամակարդակը բնութագրող կատարյալ ցուցանիշ: Կենսամակարդակի գնահատման ընթացքում օգտագործվում է ցուցանիշների մի ամբողջ համակարգ, որը կարելի է բաժանել երեք խմբի.

¹ Римащевская Н.М., Римащевский А.А., Равенство или справедливость. – М., 1991. – ст. 15-19.

1. Կենսամակարդակի ամփոփ ցուցանիշներ՝ համախառն ներքին արդյունքի, ազգային եկամտի մեծությունը բնակչության մեկ շնչի հաշվով, ծնելիության, մահացության, բնակչության բնական աճի գործակիցները, կյանքի տևողությունը, տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածությունը, գործազրկության մակարդակը, աշխատանքային շաբաթվա տևողությունը, կրթության և մշակույթի վրա ծախսվող միջոցների տեսակարար կշիռը պետական բյուջեում և այլն: Ամփոփ ցուցանիշներն արտացոլում են տնտեսական կյանքի բազմաթիվ կողմերի ազդեցությունը: Օրինակ, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծության միջոցով հնարավոր է պատկերացում կազմել երկրի քաղաքացիների սննդի, կրթական, առողջապահական, մշակութային և այլ պահանջմունքների բավարարման մասին:
2. Կենսամակարդակի բնափրային ցուցանիշներ. արտահայտում են կոնկրետ նյութական բարիքների սպառման ծավալները (սպահովվածությունը անձնական գույքով, սննդամթերքի սպառումը, կենսական նվազագույնը, տրանսպորտի առանձին տեսակներով տեղափոխված ուղևորների թիվը և այլն):
3. Կենսամակարդակի տեսակարար ցուցանիշներ. արտահայտում են կենսամակարդակի կառուցվածքը և համամասնությունները (բնակչության բաշխումը ըստ եկամտային խմբերի, եկամուտների համակենտրոնացումը և տարբերակումը և այլն):

Կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների համակարգը կարելի է դասակարգել նաև հետևյալ կերպ.

- Մակրոտնտեսական ցուցանիշներ՝ համախառն ներքին արդյունք, ազգային եկամուտ, համախառն ազգային արդյունք մեկ շնչի հաշվով:
- Բնակչության եկամտի ցուցանիշներ՝ անվանական, իրական և տնօրինվող:
- Բնակչության կողմից նյութական բարիքների ձեռքբերման վրա կատարված ծախսումներ՝ սպառման կառուցվածք, կենսական նվազագույն, սպառողական զամբյուղ:
- Ծառայության ոլորտի ցուցանիշներ՝ կոմունալ սպասարկման ապահովվածություն, առողջապահություն, մշակույթ, կրթություն:
- Զբաղվածության և ժամանակի բյուջեի ցուցանիշներ՝ ազատ ժամանակի, աշխատանքային շաբաթվա, արձակուրդների տևողության և այլն:

Կենսամակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշ է համարվում նաև կենսական նվազագույնը, որը հաշվարկվում է վիճակագրական, նորմատիվային, համակցված ռեսուրսային և այլ մեթոդներով:

Վիճակագրական եղանակով հաշվարկելիս կենսական նվազագույնը սահմանվում է երկրի բնակչության առավել պակաս ունևոր մասի (10-20%) կողմից տնօրինվող եկամուտների մակարդակին համապատասխան:

Նորմատիվային մեթոդով կատարվող հաշվարկների հիմքում դրված են սպառողական զամբյուղի մեջ մտնող ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման վրա կատարվող փաստացի ծախսերը:

Ըստ համակցված մեթոդի՝ կենսական նվազագույնն ընդգրկում է պարենամթերքի հավաքածու, որը պետք է ապահովի անհրաժեշտ կալորիայի նվազագույն քանակը, ինչպես նաև ոչ պարենային ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսերը, հարկերը և պարտադիր մուծումները, որոնք ծախսերի այդ կառուցվածքով համապատասխանում են ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների բյուջեներին:

Կենսական նվազագույնը կարող է հաշվարկվել նաև՝ ելնելով տնտեսության հնարավորություններից (ռեսուրսային մեթոդ), ինչպես նաև բնակչության շրջանում կատարված սոցիոլոգիական հարցումներից:

Կենսամակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշ է նաև կենսապահովման նվազագույն զամբյուղը, որը տարբեր ապրանքների ու ծառայությունների հավաքածու է, որը մարդուն անհրաժեշտ է գոյության համար: Ըստ կենսապահովման նվազագույն զամբյուղի կամ կենսապահովման նվազագույն բյուջեի մասին օրենքի՝ կենսապահովման նվազագույն զամբյուղը մարդու առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ միջազգայնորեն ընդունված, ֆիզիոլոգիական, առողջապահական, սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործունեությամբ հաշվարկված ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների կազմն ու կառուցվածքը սահմանող նվազագույն քանակն է, իսկ կենսապահովման նվազագույն բյուջեն՝ կենսապահովման նվազագույն զամբյուղի դրամական արժեքը: Կենսապահովման նվազագույն զամբյուղը պետք է երաշխավորի ոչ միայն գոյության միջոցների նվազագույնը, այլև դրանց արտադրական խեղման, վնասվածքի և մասնագիտական հիվանդությունների դեպքում:

ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՊՀ ասպիրանտ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՈՒԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՎՐԱ ԱԶԳՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների՝ ՀՀ-ում միայն առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրված վարկերի մնացորդը վերջին հինգ տարում աճել է շուրջ 6.75 անգամ¹:

Բանկերը և վարկային կազմակերպությունները հետևողականորեն զարգացնում ու բարելավում են իրենց վարկային ծրագրերը՝ մշակելով և առաջարկելով վարկեր՝ նախատեսված ինչպես առաջին անհրաժեշտության պահանջմունքները բավարարելու, այնպես էլ անշարժ գույքի կամ երկարատև օգտագործման ապրանքներ ձեռք բերելու համար: Սակայն մյուս կողմից գործ ունենք այն տեսանկյունից փաստի հետ, որ չնայած գործադրված ջանքերին՝ ՀՀ բնակչության մեջ դեռևս կա մի ստվար զանգված, որ խուսափում է վարկ վերցնելուց: Նման վարքագիծը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարկ վերցնելու համար հաճախորդները հաճախ ստիպված են լինում բավական ժամանակ և էներգիա ծախսել տարբեր դիմումներ գրելու, փաստաթղթեր հավաքելու և վարկ տրամադրող կազմակերպությանը որոշակի երաշխիքներով ապահովելու համար: Բացի այդ, բանկերը վարկառուի համար սահմանում են այնպիսի խիստ չափանիշներ, ինչպես օրինակ բարձր, հաստատուն և որ առավել կարևոր է՝ որևէ փաստաթղթով հիմնավորված եկամուտներ ունենալու անհրաժեշտությունը: Այս ամենի պատճառով շատերը ֆինանսական կազմակերպություններից վարկ վերցնելու փոխարեն նախընտրում են պարտք վերցնել անհատներից անգամ այնպիսի տոկոսադրույքով, որը բազմապատիկ գերազանցում է բանկերի կողմից սահմանված առանց այն էլ բարձր

¹ <http://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx> (Առևտրային բանկերի վարկերն ըստ ոլորտների):